

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ», հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) ամբուլատորիան հանդիսանում է ինստիտուտի բուժարոֆիլակտիկական ստորաբաժանում, որն ապահովում է ուսանողների բարձրակարգ բուժական հսկողությունն ու բուժումը հիվանդությունների և վնասվածքների դեպքում, իրականացնում է ուսումնական լսարանների, կաբինետների, մարզադահլիճների և մարզահրապարակների սանիտարական հսկողությունը:

1.2. Ամբուլատորիան իր գործունեությամբ ենթարկվում է ինստիտուտի ռեկտորին:

**2. ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

2.1. Ամբուլատորիայի գործառույթներն են՝

ա/ ընդունելության քննությունների ընթացքում իրագործում է դիմորդների առողջության վերաբերյալ իրազեկումը.

բ/ կատարում է հիվանդ ուսանողների ընդունելություն՝ կազմակերպելով նրանց բուժումը ամբուլատոր պայմաններում (վիրաբուժությունից, լորմասնագիտությունից, թերապիայից, ատամնաբուժությունից և ֆիզիոթերապիայից).

գ/ կազմակերպում և իրագործում է միջոցառումներ՝ մարզական վնասվածքների արոֆիլակտիկայի ուղղությամբ, խստորեն վերլուծելով նրանց պատճառները համապատասխան ամբիոնների հետ, կազմակերպում է վնասվածք ստացած ուսանողների բուժումը.

դ/ կազմակերպում և ապահովում է բուժսպասարկումը՝ բոլոր ուսումնամարզական պարապմունքները և դասընթացները մարզադաշտերում և մարզադահլիճներում.

ե/ կազմակերպում է ինստիտուտի ուսանողների մասնակցությամբ բոլոր մրցումների բուժսպասարկումը (սպարտակիադաներ, քաղաքային և հանրապետական առաջնություններ).

զ/ ապահովում է ուսանողների բուժսպասարկումը՝ ձմեռային դահուկային ուսումնամարզական հավաքների ընթացքում.

է/ իրագործում է սանիտարահիգիենիկ հսկողություն ինստիտուտի սննդի օբյեկտներում.

ը/ ուսանողների շրջանում կազմակերպում և անցկացնում է պրոպագանդիստական աշխատանք՝ առողջ ապրելակերպի, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքների վերաբերյալ.

թ/ կազմակերպում և իրագործում է ամբուլատորիայի բուժաշխատողների որակավորման բարձրացում.

ժ/ սերտորեն աշխատում է ինստիտուտի դեկանատների, ամբիոնների հետ և ըստ ընդունված կարգի ներկայացնում է հաշվետվություններ:

### **3.ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

3.1.Ամբուլատորիան ունի հետևյալ կառուցվածքային բաժանմունքները.

3.1.բուժընդունման.

3.2.ֆիզիոթերապևտիկ.

3.3.վիրակապաբուժագործության:

3.4.Ամբուլատորիայի աշխատողները պարտավոր են պահպանել ինստիտուտի ներքին կարգապահական կանոնները, գործել իրենց իրավունքների և պարտականությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ինստիտուտի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3.5. Ամբուլատորիան ունի գույք, բուժսարքավորումներ, որոնց պահպանման համար ամբուլատորիայի աշխատակիցները կրում են պատասխանատվություն:

3.6. Ամբուլատորիան ունի կնիք և դրոշմակնիք:

#### **4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

4.1 Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: